Հարթավան

Բնակչություն՝ 913

Տարածքը՝ 12.1 կմ2 (1206 հա)

Գյուղ Ապարանի տարածաշրջանում, Ապարան քաղաքից ընկած է հարավ, Երևան-Ապարան խճուղու վրա: Մարզկենտրոնից գտնվում է 14կմ հեռավորության վրա: Նախկինում կոչվել է Կարաքլիս, Գարագիլիսե, Կարաքիլիսա, Ղարաքիլիս անվանումները: Հարթավան է վերանավանվել 1950 թ-ին: Գյուղի շրջակայքում է գտնվում ս. Աստվածընկալ վանքը, որի եկեղեցին կառուցվլ է 1244 թ-ին Քուրդ իշխանի կողմից:
Գյուղն ընկած է Գեղարոտ գետի ավազանում: Գտնվում է Ապարանի սարավանդում՝ ծովի մակարդակից 1870 մ բարձրության վրա: Կլիման բարեխառն լեռնային է: Ձմեռները տևական են, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Հուլիսյան միջին ջերմաստիճանը տատանվում է 160-180, հունվարյանը՝ -60,-80: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 450-600 մմ: Բնական լանդշաֆտները սևահողային տափաստաններ են:
Գյուղի բնակչության մի մասը տեղափոխվել է Արևմտյան Հայաստանից՝ Ալաշկերտի շրջանից: 1831 թ-ին ունեցել է 178, 1897 թ-ին՝ 689, 1939 թ-ին՝ 483, 1959 թ-ին՝ 465, 1979 թ-ին՝ 600 բնակիչ: Ըստ 2005 թ-ի ազգային վիճակագրական ծառայության տվյալների գյուղի բնակչության թիվը կազմել է 978 մարդ է: Սեռային կազմում տղամարդիկ կազմում են 48%, կանայք՝ 52%: Բնակչության մեջ մինչաշխատունակ տարիքի բնակիչները կազմում են 29%, աշխատունակները՝ 61%, հետաշխատունակները՝ 10%: Գյուղն ունի առկա 231 տնտեսություն: Ունի դպրոց, գրադարան, բուժկետ, կապի հանգույց:
Տնտեսության գլխավոր ճյուղը գյուղատնտեսությունն է: Գյուղատնտեսական հողահանդակները օգտագործվում են գլխավորապես որպես վարելահողեր, արոտավայրեր: Պահուստային հողերից արոտավայրերը զբաղեցնում են 63 հա, մոտ 164հա՝ վարելահողեր: Զբաղվում են դաշտավարությամբ, բանջարաբոստանային, հացահատիկային կուլտուրաների մշակությամբ: Զբաղվում են խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծությամբ, մեղվաբուծությամբ, թռչնաբուծությամբ:
Արդյունաբերություն չունի:
Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում է խմելու և ոռոգման ջրի ջրագծերի, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը: